ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/44

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2021 թ. N 44

«ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊԸ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ
Գործունեության հասցեն՝ *ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 51, Հրաչյան Քոչարի, 21*

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի մայիսի 5-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՄՈՒՀ, ՄԲԻ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողություններն ու առաջարկությունները, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ՄՈՒՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 14 մայիսի 2020թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 8 օգոստոսի 2020թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 9-12 նոյեմբերի 2020թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 12 փետրվարի 2021թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 19 փետրվարի 2021թ.

«Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ համաձայն «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ-ն իր առաքելությունը ձևակերպել է 2015-2020 թթ. Ռազմավարական ծրագրում: Առաքելության համաձայն՝ «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ-ն «միջին մասնագիտական կրթական հաստատություն է, որը նպատակաուղղված է առողջապահության ոլորտում բարձրորակ մասնագետների պատրաստմանը, միջին մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով ուսանողների մոտ գիտելիքների ստեղծմանը, պահպանմանը, հմտությունների և կարողությունների ձևավորմանը, սիրո և նվիրվածության զգացումների առաջացմանն ու ամրապնդմանն իր ընտրած մասնագիտության նկատմամբ, ինչպես նաև ժողովրդին ազնվությամբ ծառայելուն»:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից **«Կառավարում և վարչարարություն», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ», «Հետազոտություն և զարգացում», «Որակի ապահովման ներքին համակարգ»** չափանիշները գնահատվել են անբավարար:

1. ***ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:***

ՄԲԻ-ին իրականացնում է միայն **միջին մասնագիտական կրթական ծրագրեր**: Գործող ՄԿԾ-ները հիմնականում համահունչ են Որակավորումների ազգային շրջանակին և պետական չափորոշիչների պահանջներին: ՄԿԾ-ների իրականացման համար հաստատությունը հիմնականում ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, սերտ համագործակցում է գործատուների ու գործընկերների հետ, օգտագործելով նրանց հնարավորությունները ուսանողների պրակտիկաների և գործնական հմտությունների ձևավորման համար:

ՄՈՒՀ-ի անձնակազմը համալրված է երկար տարիների մանկավարժական փորձ ունեցող փորձառու մասնագետներով: Այնուամենայնիվ, առկա են դասախոսական կազմի կայունության, բարձր որակավորում ունեցող կադրերի ներգրավման, երիտասարդ դասախոսական կազմի խրախուսման խնդիրներ: Կադրերի համալրման ներկայիս քաղաքականությունը բարելավման կարիք ունի: Ներկայում,ՀԲԻ-ն աշխատանքներ է իրականացնում խնդրերի լուծման ուղղությամբ:

ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովում է գործնական հմտություններով օժտված և գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը:

2. ***Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը***

ՄՈՒՀ-ում առկա է ռազմավարական կառավարման նախադրյալներ: Մշակված է Ռազմավարական ծրագիրը, որն ընդունվում է շահակիցների կողմից:

ՄՈՒՀ-ում առկա են կառավարման համակարգի արդյունավետության և մարդկային ռեսուրսների կառավարման որոշակի խնդիրներ, ուստի ռազմավարական կառավարումն ու պլանավորումն ունի որոշակի թերություններ: Գնահատման առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների վրա հիմնված ռազմավարական կառավարում որպես այդպիսին չի իրականացվում:

Չնայած առկա են տվյալների հավաքագրման մեխանիզմներ և համակարգեր, սակայն պլանավորման, ինչպես նաև մշտադիտարկման նպատակով միշտ չէ, որ դրանք նպատակին են ծառայեցվում:

ՄՈՒՀ-ի ղեկավար մարմինները հիմնականում առաջնորդվում են հաստատված ռազմավարական ծրագրերով և պահպանում են հաշվետվողականությունը իրենց շահակիցներին:

Թեև ՄՈՒՀ-ի կառավարման կառույցը կարևորում է որակի ապահովման համակարգի կարևորությունը և դրա զարգացումը, սակայն ՈԱ գործընթացները ներդրման փուլում են, իսկ շահակիցների կողմից տրված առաջարկությունները դեռևս պլանավորվում են:

Կառավարման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն:***

Չնայած ՄՈՒՀ-ում հետազոտական գործունեությանը կարևորվում է, առկա է հետազոտական միջավայրի նախադրյալներ, կարևորվում է ուսանողների մոտ վերլուծական կարողությունների ձևավորումը, այնուամենայնիվ հետազոտական գործունեության զարգացման համար անհրաժեշտ և հստակ պլանների, գործուն քաղաքականության մշակումն ու իրագործումը կնպաստեն ոլորտի համաչափ զարգացմանը: Իսկ միջազգայնացմանն ուղղված ձգտումներում կան կոնկրետ քայլեր, առկա է բենչմարքինգի իրականացման փորձ, լայն համագործակցության շրջանակ արտաքին շահակիցների հետ:

Շահակիցների հետ հետադարձ՝ կապի զարգացումը և խնդիրների լուծումը կարող են հնարավորություններ ստեղծել ՄՈՒՀ-ի հետագա զարգացման համար:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ծրագիրը հիմնականում իրատեսական է և պլանավորված բարեփոխումները կբերեն փոփոխությունների, սակայն պետք է նախատեսել պարբերաբար մշտադիտարկումներ, որպեսզի ապահովեն նախատեսվող մշակումների իրագործելիությունը:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:

զ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու համալսարանի հավակնությունների տեսակետից՝ միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները:

3. Հատուկ ուշադրություն դարձնել.

ա) Մասնագիտության կրթական ծրագրերի, իրականացվող գործընթացների մշտադիտարկման, արդյունավետության գնահատմանը ու բարելավմանը,

բ) ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,

գ) արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը,

դ) որակի ներքին ապահովման կայուն համակարգի ստեղծմանն ու շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանը:

4. Կազմակերպել ՃԿՊԱ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:

5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**

2021 թ., հունվարի 15
ք.Երևան